



Հաստատում եմ

«ՀԷԲՊՆՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ

Տնօրենի պաշտոնակատար՝

Կ. Եփրեմյան

2017թ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-10» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը և գնման առարկայի համառոտ բնութագիրը
ՀՀ ԷԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 ա հասցեում, 2017 թվականի հունիսի 1-ին հայտարարել է «ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի գնման առարկա է հանդիսանում «Անվադողերի» ձեռքբերումը:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրությունը
Ապրանքի ձեռքբերումը պայմանավորված է ՀՀ ԷԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների բավարարման անհրաժեշտությամբ: Գնումների պլանում գնման առարկայի նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորը, հետևաբար գնումն իրականացվել է գնանշման հարցման ընթացակարգով

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները
«ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստերը հաստատվել են գնահատող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ին կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված պարզաբանումների և հարցումների վերաբերյալ
Գնման վերաբերյալ պարզաբանումներ չեն պահանջվել և չեն ներկայացվել:

5. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները
Հրավերը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am գնումների պաշտոնական ինտերնետային կայքում և www.armeps.am էլեկտրոնային համակարգում: «ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցը:

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|-----|--------------------|--|
| 1 | ԱՁ Թեմուր Գալստյան | Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղ., 84 շենք, 5 բն. Հեռ. 093-43-43-41 |
| 2 | «Դարֆ» ՍՊԸ | ք. Երևան, Գայի պ. 1/7, հեռ. 091-10-84-21 |
| 3 | «Արպանիվ» ՍՊԸ | ք. Երևան, Նար- Դոսի 122, հեռ. 010-54-15-07 |
| 4 | «Սենտրալ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, 'Իավթաշեն Եղվարդի խճ. 108 հեռ. (096) 669605 |

6. Հայտերի բացումը և հայտերով ներկայացրած գները:

Հայտը բացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով 2017 թվականի հունիսի 8-ին ժամը 16:30-ին: Մասնակիցների առաջարկած գները հետևյալն են՝

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ |
|-----|------------------------|--|-----------------------------|
| 1 | ԱՁ Թեմուր Գալստյան | 726000 | 871200 |
| 2 | «Դարֆ» ՍՊԸ | 883333 | 1060000 |
| 3 | «Արպանիվ» ՍՊԸ | 726660 | 871992 |
| 4 | «Սենտրալ» ՍՊԸ | 1100000 | 1320000 |

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները: Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Հայտերը գնահատվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հրավերով սահմանված կարգով՝ www.armeps.am էլեկտրոնային համակարգում: Գնահատման արդյունքում ԱՁ Թեմուր Գալստյանի, «Դարֆ» և «Արպանիվ» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատվել են բավարար, իսկ «Սենտրալ» ՍՊ ընկերության հայտը գնահատվել է անբավարար՝ փաստաթղթերը հրավերի պահանջներին անհամապատասխան կազմված լինելու հիմքով (փաստաթղթերում բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը):

8. Հաղթող մասնակցի անվանումը, պայմանագրի կնքումը և ընթացակարգի արդյունքների ամփոփումը:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել ԱՁ Թեմուր Գալստյանը: Մասնակցից պահանջվել են ապրանքի ամբողջական նկարագիրը և հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Հրավերով սահմանված ժամկետում՝ մասնակիցը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացվել է հարցման վերաբերյալ եզրակացությունը: Փաստաթղթերի գնահատման նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հունիսի 14-ին գնահատող հանձնաժողովի որոշմամբ քննարկված /հաղթող/ մասնակցի է ճանաչվել ԱՁ Թեմուր Գալստյանը:

1. Անգործությամբ ժամկետի ավարտից հետո՝ 2017 թվականի հունիսի 21-ին պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել ընտրված մասնակցին՝ ԱՁ Թեմուր Գալստյանին: Մասնակիցը ներկայացրել է պայմանագրի կատարման ապահովում միակողմանի հաստատված տուժանքի ձևով պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

2. 2017 թվականի հունիսի 27-ին ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ և ԱՁ Թեմուր Գալստյանի միջև կնքվել է «Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման» գնման N:«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-10-1» ծածկագրով պայմանագիր:

2. 2017 թվականի հունիսի 28-ին կայացել է ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստ:

9. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը:

Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

10. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները:

Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Գնումների ավագ մասնագետ՝



Ն. Նիկոլայան